



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (27)

Естественные и физико-математические науки

(География и геология, информатика и прикладная математика,
биология, химия, фармацевтика, физика и радиопизика)

Natural and Physical-Mathematical Sciences

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics,
Biology, Chemistry, Pharmacy, Physics and Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (27)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական
մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
Ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրոսյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Մ. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Ваданян
д.б.н., проф. Л. Навасардян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Ваданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. L. Navasardyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlishov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. H. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant Prof. A. Manaselyan
PhD, Assistant Prof. A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈՒԳԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

Նավասարդյան Ամալյա

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական ղեկավար՝ ա.գ.դ., պրոֆ. Ա. Ավագյան
Էլ. փոստ՝ amalia.navasardyan@gmail.com

ԶՔՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻԱՎՈՐ

Սույն հոդվածում քննարկվել է զբոսաշրջության տարածքային կազմակերպման բնույթը, նշանակությունը, զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում ունեցած դրա կարևորությունը և տարածքային կազմակերպման արդյունավետությունը:

Հստակեցվել է «զբոսաշրջային դեստինացիա» հասկացությունը, քննարկվել են զբոսաշրջային դեստինացիաների սահմանման վերաբերյալ տարբեր հեղինակների մի շարք մոտեցումներ, պարզաբանվել և հստակեցվել են դրանք: Զբոսաշրջային դեստինացիաների ձևավորման անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով կատարվել է համալիր և համակողմանի վերլուծություն:

Զբոսաշրջության զարգացման պարագայում առաջ եկավ աշխարհագրական միջավայրի, դրա բազմազանության ու տարբերությունների ուսումնասիրման անհրաժեշտություն՝ զբոսաշրջային արդյունքի ստեղծման և իրացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այդ տարբերությունների և բազմազանության շնորհիվ է, որ տարածքների միջև տեղի է ունենում գործառույթների բաշխում, և որպես դրա արդյունք՝ մրցակցություն և համագործակցություն:

Հասարակության տարածքային կազմակերպումը ևս այդ գործընթացի արդյունք էր, որը գիտական գրականության մեջ գործածվում է երկու իմաստով՝ որպես գործընթաց և գործընթացի արդյունք [2, էջ 123]: Տարածքային կազմակերպումը [3, էջ 304] հնարավորություն է տալիս օրինաչափ և փոխկապակցված որոշակի գործընթացի արդյունքում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կարգավորել տեղաբաշխման գործընթացը: Եթե տեղաբաշխման պարագայում դիտարկում ենք օբյեկտի՝ տարածության մեջ տեղակայումը, ապա տարածքային կազմակերպման ժամանակ քննարկում ենք նաև, թե ինչու կամ ինչպես է տեղաբաշխվում օբյեկտը տարածության մեջ: Որևէ ոլորտի զարգացման պարագայում ցանկալի է կատարել օբյեկտների համատեղ տեղաբաշխում, տեղաբաշխում մեկը մյուսի նկատմամբ՝ դրանք դիտարկելով համակարգի առանձին տարրեր: Տարածքային կազմակերպումը թույլ է տալիս բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, հեշտացնել և կանոնավորել հասարակական սուբյեկտների գործունեությունը:

Աշխարհագրական միջավայրի ուսումնասիրությունը հեշտացնելու, ինչպես նաև կառավարչական գործառույթներն իրականացնելու և վերահսկելու արդյունքում

տարածքներն սկսեցին շրջանացվել, ինչի արդյունքում գիտական գրականության մեջ ներմուծվեց «շրջանացում» և «շրջանագոյացում» հասկացությունները [2, էջ 128]: Գիտական լեզվով ասած՝ զարգացավ շրջանագոյացման երևույթը, ձևավորվեցին տարբեր մեծության և բովանդակության տարածքներ իրենց հատկանիշներով [2, էջ 128]:

Զբոսաշրջության առանձին ճյուղերի տեղաբաշխումը չի կարող դիտարկվել որպես հասարակական կյանքից մեկուսացված բնագավառ: Այն պայմանավորված է բազմաթիվ գործոններով և կապված է բնական պայմանների ու ռեսուրսների, դրանց քանակի ու որակի, օբյեկտի աշխարհագրական դիրքի և բազմաթիվ այլ երևույթների հետ: Ցանկացած դեպքում օբյեկտների տեղաբաշխման վրա ուղղակի կամ անուղղակի ազդում են մի քանի գործոններ:

Հաշվի առնելով զբոսաշրջային ոլորտի զարգացման տեմպերը, տարածական ընդգրկվածությունը, տարածքային և գործառույթային տարբերությունները, կառավարչական և վերահսկողական գործառույթների իրականացումը, զբոսաշրջության ոլորտում ևս աստիճանաբար զարգացավ շրջանացման և շրջանագոյացման երևույթը, որը դրսևորվեց զբոսաշրջային կլաստերների և զբոսաշրջային դեստինացիաների ձևավորմամբ:

Զբոսաշրջային դեստինացիան [4, էջ 91] դարձավ զբոսաշրջության ոլորտում տարածքային կազմակերպման ինքնատիպ միավոր: Եթե շրջանի պարագայում այն ինքնատիպ տարածք էր իր ուրույն հատկանիշներով, սեփական բնութագրով և տարբերակիչ հատկանիշներով, ապա զբոսաշրջային դեստինացիան դարձավ ոչ միայն զբոսաշրջային գործառույթ իրականացնող և ինքնատիպ տարածք, այլև կառավարչական մարմին, որտեղ զուգորդվեցին սոցիալական, տնտեսական և վարչական ոլորտները: Որպեսզի հասկանանք զբոսաշրջային դեստինացիայի ձևավորման անհրաժեշտությունը, քննարկենք զբոսաշրջային դեստինացիայի սահմանման վերաբերյալ մի քանի հեղինակների մոտեցումներ, որոնց էությունը, նշանակությունը և ձևավորման անհրաժեշտությունը գիտական շրջանակներում դեռևս չեն հստակեցվել:

Դեստինացիա հասկացության սահմանման վերաբերյալ գիտական գրականության մեջ տարբեր տեսակետներ են առաջ քաշվել: Զբոսաշրջության եզրույթների բառարանում դեստինացիան սահմանվում է զբոսաշրջային գրավչությամբ օժտված տարածաշրջան, շրջան, քաղաք կամ այլ տարածք, որը խթանում է զբոսաշրջիկների հետաքրքրությունը, հետևապես նաև՝ զբոսաշրջության զարգացումը [5, էջ 165]:

Հաճախորդների տեսանկյունից դեստինացիան տարածք է, որտեղ զբոսաշրջիկը ճանապարհորդության ընթացքում անց է կացնում իր հիմնական ժամանակն՝ օգտվելով առաջարկվող ծառայություններից: Այն ընտրում է զբոսաշրջիկը, և որը, վերջինիս կարծիքով, լավագույնս համապատասխանում է իր կարիքներին [8]:

Վարչական սահմաններից ելնելով՝ զբոսաշրջային դեստինացիայի տարանջատումը պետք է կատարվի ըստ համապատասխան տարածքի վարչական բաժանման (օրինակ՝ քաղաքի կամ տեղական ինքնակառավարման `սուբյեկտի) [7]: Վարչական սահմաններով պայմանավորված բաժանումը հանգեցնում է որոշ խնդիրների, քանի որ վարչական միավորները հաճախ ներկայացնում են դեստինացիայի միայն մի մասը, և հաճախ դեստինացիաները կարող են չհամընկնել վարչական սահմանների հետ:

Ըստ Ն. Լեյպերի սահմանման՝ «դեստինացիան սահմանափակ տարածք է, որը զբոսաշրջիկն ընտրում է այցելության համար և այնտեղ անցկացնում է որոշ ժամանակ, տարածք, որտեղ տեղի է ունենում զբոսաշրջիկների փոխազդեցությունը զբոսաշրջային ենթակառուցվածքների հետ» [7]:

Ս. Կուպերը և Դ. Ֆլետչերը զբոսաշրջային դեստինացիան համարում են «միջոցների և ծառայությունների ամբողջություն՝ նպատակաուղղված զբոսաշրջիկների պահանջմունքների բավարարմանը» [7]:

Բ. Ռիջի և Դ. Կրոուչի սահմանման համաձայն՝ զբոսաշրջային դեստինացիան սահմանափակ տարածք է վարչական սահմաններով. երկիր, մակրոտարածաշրջան (մի քանի երկրների ամբողջություն), նահանգ կամ մարզ երկրի ներսում, քաղաք, ազգային պարկ կամ հուշարձան [7]:

Օ. Նիկիտինայի բնորոշման համաձայն՝ զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջային ռեսուրսների բարձր խտությամբ օժտված աշխարհագրական տարածք է, որը բնորոշվում է նաև օժանդակող և սպասարկող անհրաժեշտ ենթակառուցվածքներով [7]:

Է. Պավլովայի բնորոշմամբ՝ զբոսաշրջային դեստինացիան սոցիալ-աշխարհագրական տեղանք է, որն ընտրվել է զբոսաշրջիկի կամ զբոսաշրջային պահանջարկ ունեցող սեզմենտի կողմից ճանապարհորդության նպատակով, և ունի անհրաժեշտ կազմակերպչական, տեղավորման բոլոր միջոցները, սպասարկող և զվարճանքի ենթակառուցվածքները [7]:

Ա. Զորինի սահմանման համաձայն՝ զբոսաշրջային դեստինացիան ռեկրեացիոն տարածքային համակարգերի ռեգիոնալ տեղայնացման օբյեկտ է. երկիր-շրջան-լանդշաֆտ-կենտրոն-երթուղի [7]:

Վ. Ֆրամկեն տվել է դեստինացիայի երկու՝ դասական կամ բիզնես և սոցիալ-մշակութային մոտեցում: Դեստինացիան հետաքրքրությունների, տարբեր տիպի գործառույթների, ծառայությունների, զվարճանքի ենթակառուցվածքների ամբողջություն է, որոնք բնորոշում են տարածքի յուրատիպությունը: Ըստ Ֆրամկեի՝ զբոսաշրջային դեստինացիան բնորոշելու համար առանձնացվել են հինգ հիմնական փոխկապակցված ասպեկտներ՝

- աշխարհագրական-տարածքային,
- ենթակառուցվածքային-ռեսուրսային,

- մարքեթինգային,
- սոցիալական,
- կառավարչական [7]:

Այս փոխկապակցված տարրերի ամբողջությունը կարող է ձևավորել դեստինացիա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածքային կազմակերպման միջոցով դեստինացիաների առանձնացումը լուծում է մի շարք խնդիրներ: Առաջին հերթին կառավարչական գործառույթների իրականացումը նպաստում է տարածքների արդյունավետ օգտագործմանը, զարգացման ծրագրերի մշակմանը, ռեսուրսների կադաստրավորմանը, գնահատմանը, ռացիոնալ օգտագործմանն ու ներգրավմանը զբոսաշրջության ոլորտ, սոցիալական խնդիրների լուծմանը՝ ապահովելով ստացված եկամուտների բաշխումը դեստինացիայի տարածքում բնակվող և զբոսաշրջության ոլորտ ներգրավված անձանց միջև, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծում, ենթակառուցվածքների բարելավում: Դեստինացիայի ստեղծմամբ և տարածքի կառավարմամբ հնարավորություն է ստեղծվում սոցիալական, տնտեսական և կայուն զարգացման հայեցակարգից բխող այլ խնդիրներ լուծել: Հետևաբար, ձեռքբերված եկամուտների ներդրումը տնտեսության մեջ, սոցիալական զբաղվածությունը, տարածքի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը, կատարված ներդրումները, գովազդային և մարքեթինգային առաջխաղացման ծրագրերը նպաստում են զբոսաշրջային շուկայում տարածքների նկատմամբ հետաքրքրության ավելացմանը և զբոսաշրջային հոսքերին:

Դեստինացիաների ձևավորման գործոն է նաև շուկայական միջավայրը: Որոշ տեսաբանների կարծիքով դեստինացիաների սահմանների հստակեցումը տեղի է ունենում շուկայական հարաբերությունների հետևանքով, և շուկան է որոշում դեստինացիա համարել ամբողջ երկիրը, թե օրինակ՝ երկրի առանձին շրջանները կամ քաղաքները:

Դեստինացիայի ձևավորման զբոսաշրջային մոտեցումը մի փոքր այլ է: Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության սահմանման համաձայն *«զբոսաշրջային դեստինացիան ֆիզիկական միջավայր է, որտեղ զբոսաշրջիկները անցկացնում են նվազագույնը մեկ գիշերակաց: Դեստինացիան ունի ֆիզիկական և վարչական սահմաններ, որոնք առանձնացնում են դեստինացիայի կառավարման համակարգը, իմիջը, և որը բնորոշում է վերջինիս շուկայական մրցունակությունը»* [7]:

Դեստինացիայի պարագայում մեծ ուշադրություն է դարձվում կառավարման գործընթացին, երբ տարածքի զարգացման համար առաջ են քաշվում տարբեր տեսակետներ: Տարածքային կազմակերպման միավորի՝ դեստինացիայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, այն զարգացնելու խնդիրը դրվում է դեստինացիայի կառավարման կազմակերպության (ԴԿԿ) վրա, որն իր հերթին մշակում է տվյալ տարածքի զարգացման ծրագիրը [6, 4]: Դեստինացիայի տարանջատումը միշտ չէ, որ հիմնված է վարչական բաժանման վրա, ուստի վարչական կառավարման օղակը

երբեմն չի կարող կառավարել դեստինացան և դրա զարգացման գործընթացը: Հետևաբար, առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել վարչական սահմանները:

Դեստինացիաների ձևավորման անհրաժեշտությունը կապված է նաև տարածքների ռացիոնալ օգտագործման հետ, քանի որ դեստինացիաների կառավարման կազմակերպությունը ուսումնասիրում, գնահատում է ռեսուրսները և դրանց օգտագործման հնարավորությունները: Դեստինացիաների ձևավորումն անհրաժեշտ է նաև կայուն զարգացում ապահովելու տեսանկյունից, քանի որ սոցիալական, տնտեսական և բնապահպանական ասպեկտները հաշվի են առնվում դեստինացիաների կառավարման ժամանակ: Որպես զբոսաշրջության տարածքային կազմակերպման միավոր՝ դեստինացիայի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է կայուն զարգացման գերակայությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեստինացիայի պարագայում գործընթացն ավելի համակարգված է և արդյունավետ:

Դեստինացիան տարբերվում է մշտական բնակության վայրից և ունի որոշ առանձնահատկություններ, որոնց շնորհիվ էլ ընտրում է զբոսաշրջիկը: Բայցևայնպես, տարածքային կազմակերպման դեպքում որոշվում է նաև, թե որ տարածքները դեստինացիա դառնալու ինչ նախադրյալներ, ռեսուրսներ ու գրավչություններ ունեն:

Ֆիզիկական աշխարհագրական տարածքը զբոսաշրջային դեստինացիա դառնալու համար կամ, ինչպես ասում են, զբոսաշրջիկների ուշադրությունը գրավելու համար պետք է բավարարի մի շարք պայմանների՝

- տարածքը պետք է ունենա զբոսաշրջային գրավչություն, հետաքրքրություն, որպեսզի ապահովի զբոսաշրջային հոսքեր,
- տրանսպորտային հասանելիություն,
- պետք է ապահովված լինի զբոսաշրջիկներին սպասարկելու համար նախատեսված անհրաժեշտ ենթակառուցվածքներով և ծառայությունների բազմազանությամբ,
- տեղեկատվական համակարգերի հասանելիություն [1, էջ 47]:

Այնուամենայնիվ, ոչ բոլոր տարածքները կարող են դառնալ զբոսաշրջային դեստինացիաներ: Կատարված տեսական վերլուծությունները հիմք են փաստելու, որ զբոսաշրջային դեստինացիաների ձևավորումը զբոսաշրջության կայուն զարգացմանը նպաստող գործընթաց է, և զբոսաշրջության զարգացման նման առաջընթացի պարագայում զբոսաշրջության տարածքային կազմակերպման արդյունավետ միավոր է:

Այսպիսով՝ զբոսաշրջային դեստինացիաների ձևավորման անհրաժեշտությունը բխում է զբոսաշրջային կենտրոնների և շրջանների կայուն զարգացման նպատակներից, ինչի արդյունքում հնարավոր է դառնում կառավարել և վերահսկել զբոսաշրջության գործընթացը որևէ տարածքում:

Զբոսաշրջային դեստինացիայի ձևավորման անհրաժեշտությունը կապված է կոնկրետ տարածքում զբոսաշրջային ռեսուրսների գնահատման և ռացիոնալ օգտա-

գործման հետ՝ միաժամանակ ապահովելով սահմանափակ տարածքների համար տնտեսական, սոցիալական, բնապահպանական և վարչական կառավարման արդյունավետություն՝ շուկայական հարաբերությունների զարգացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Սայադյան Հ.**, Զբոսաշրջության տնտեսագիտություն (մակրո և միկրո տնտեսագիտություն), Երևան, 2014, 208 էջ:
- [2] **Վալեսյան Լ.**, Հասարակական աշխարհագրության ներածություն, Երևան, 1999, 228 էջ:
- [3] **Трешников А.**, Географический энциклопедический словарь. Понятия и термины, Москва, 1988, 432 с.
- [4] **Морозов М., Морозова Н., Карпова Г., Хорева Л.**, Экономика туризма, Москва, 2014, 288 с.
- [5] **Medlik S.**, Dictionary of Travel, Tourism, & Hospitality, Oxford, 2003, 273 p.
- [6] Nachhaltigkeit im Deutschlandtourismus, Berlin, März, 2016, 84 p.
- [7] **Кирьянова Л. Г.**, «Туристская дестинация» как комплексный концепт и ключевой элемент туристской системы, Вестник КемГУ, 2012, №4 (52), т. 1, сс. 131-6, URL: http://tourlib.net/statti_tourism/kiryanova2.htm (дата обращения: 05.04.2018).
- [8] **Серая Е. И.**, Дестинация в системе региональных туристских кластеров, Проблемы современной экономики, 2013, №2 (46), сс. 286-90, URL: http://tourlib.net/statti_tourism/seraya.htm (дата обращения: 05.04.2018).

Նավասարդյան Ամալյա

ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻԱՎՈՐ

Բանալի բառեր՝ զբոսաշրջային դեստինացիա, զբոսաշրջային գրավչություն, աշխարհագրական միջավայր, տարածքային կազմակերպում, կայուն զարգացում:

Սույն հոդվածում քննարկվել է զբոսաշրջության տարածքային կազմակերպման բնույթը, զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում ունեցած դրա կարևորությունը և տարածքային կազմակերպման արդյունավետությունը: Հստակեցվել է «զբոսաշրջային դեստինացիա» հասկացությունը, քննարկվել են դեստինացիաների սահմանման վերաբերյալ տարբեր հեղինակների մի շարք մոտեցումներ:

Զբոսաշրջային դեստինացիաների ձևավորման անհրաժեշտությունը բխում է տարածքների ռացիոնալ օգտագործման, սոցիալական և տնտեսական ոլորտների

գարգացման և կառավարչական խնդիրների լուծման նպատակներից, ինչի արդյունքում հնարավոր է դառնում կառավարել և վերահսկել զբոսաշրջության գործընթացը որևէ տարածքում:

Навасардян Амалия

НЕОБХОДИМОСТЬ ФОРМИРОВАНИЯ ТУРИСТСКОЙ ДЕСТИНАЦИИ КАК ЭЛЕМЕНТ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОРГАНИЗАЦИИ ТУРИСТИЧЕСКОЙ ОТРАСЛИ

Ключевые слова: туристская дестинация, туристская аттрактивность, географическая среда, территориальная организация общества, устойчивое развитие.

В статье обсуждается суть региональной организации туризма, её важность в развитии туризма и эффективности территориальной организации. Был разъяснен термин «туристская дестинация», а также были обсуждены подходы различных авторов к определению дестинации.

Необходимость формирования туристских дестинаций связана с целью рационального использования территорий, развития социально-экономической сферы и управления проблемами, в результате чего становится возможным управление и контролирование туристического процесса на любой территории.

Navasardyan Amalya

NECESSITY OF FORMING TOURISM DESTINATIONS AS ELEMENT OF TOURIST TERRITORIAL ORGANIZATION

Key words: tourist destination, tourist attraction, geographical area, territorial organization of society, sustainable development.

The article discusses the essence of regional organization of tourism, its importance for the development of tourism and the effectiveness of the territorial organization of society. The concept of 'tourist destination' has been clarified, we have also discussed different approaches of different authors towards the definition of destinations.

The necessity of formation of tourist destinations is connected with the purpose of rational use of territories, development of social and economic sphere and management of problems, as a result of which it becomes possible to manage and control tourist processes in any area.